ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 69/09

Քաղ. Երևան 15 սեպտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Բ.Ծ. Վարդանյան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. սեպտեմբերի 15-ի նիստում (արձանագրություն № 73/3) քննարկեց «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի 2009թ.հուլիսի 6-ի դիմումը (մտից հ.492, 06.07.09) POTOMAC TOBACCO COMPANY besloten vennootschaft met beperkte aansprakelijkheid (BE) ընկերության IR 770008 միջազգային գրանցմամբ YES բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով Հայաստանի Հանրապետության տարածքում վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի կողմից կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ POTOMAC TOBACCO COMPANY ընկերության անունով գրանցված YES (IR 770008) բառային ապրանքային նշանը սեփականատիրոջ կողմից գրանցման պահից սկսած չի օգտագործվել և չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 25, 34 և 35-րդ դասերի ապրանքների համար: Ելնելով դրանից և առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել կամ օգտագործվել է ոչ ողջամիտ ծավալներով ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից», դիմողը խնդրել է YES (IR 770008) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի

Հանրապետության տարածքում վաղաժամկետ դադարեցնել ԱԾՄԴ 34 և 35-րդ դասերի ապրանքների համար:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 36-րդ կետի համաձայն 09.07.09թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ տեղեկացրել է YES (IR 770008) ապրանքային նշանի սեփականատեր՝ POTOMAC TOBACCO COMPANY (Verbindingsdok Oostkaai 13, B-2000, Antwerpen, Belgium) ընկերությանը ինչպես նաև նրա ներկայացուցիչ՝ BUREAU M.F.J. BOCKSTAEL NV ընկերությանը (Arenbergstraat 13, B-2000, Antwerpen, Belgium) բողոքարկման խորհրդի կողմից «Ինտերնեյշնլ Մասիս ուՏաբակ» ՍՊԸ-ի հուլիսի 6-ին ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2009թ. սեպտեմբերի 15) և վայրի մասին՝ կցելով դիմումի պատճենը: 18.07.09թ. սեփականատիրոջն ուղարկած ծանուցումը հետ է եկել՝ ծրարի վրա ընկերության հասցեի փոփոխության մասին արված նշումով, իսկ 25.07.09թ. ստացվել է POTOMAC TOBACCO COMPANY ընկերության ներկայացուցիչ՝ BUREAU M.F.J. BOCKSTAEL NV ընկերության 2009թ. հուլիսի 14-ին պատշաճ ծանուցված լինելու մասին համապատասխան փոստային ծանուցագիր:

Սակայն բողոքարկման խորհրդի 2009թ. սեպտեմերի 15-ի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից չի ստացել:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ POTOMAC TOBACCO COMPANY (BE) ընկերությունը, որը պատշաճ ծանուցված է եղել ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, ինչպես նաև նիստի անցկացման թվականի և վայրի մասին՝ նկատի ունենալով բողոքարկման խորհրդի կողմից 09.07.09թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ POTOMAC TOBACCO COMPANY ընկերության ներկայացուցիչ BUREAU M.F.J. BOCKSTAEL NV ընկերությանը (Arenbergstraat 13, B-2000, Antwerpen, Belgium) ուղարկած ծանուցումը, ինչպես նաև 14.07.09թ. նշված ծանուցումը ստանալով, ունեցել է բավական ժամանակ YES (IR 770008) ապրանքային նշանը ՀՀ-ում օգտագործելու վերաբերյալ որևէ փաստ, ապացույց կամ որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդ ներկայացնելու համար, ինչն իր կողմից չի արվել:

Հետևապես բողոքարկման խորհուրդը համարում է, որ սպառվել են սեփականատիրոջ՝ POTOMAC TOBACCO COMPANY (BE) ընկերությանը ծանուցելու իր հնարավորությունները, սակայն Հայաստանի Հանռապետությունում YES (IR 770008) ապրանքային նշանը չօգտագործելու

վերաբերյալ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, հետեապես դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, իչպես նաև «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 80-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի 2009թ. հուլիսի 6-ի դիմումն ամբողջովին և POTOMAC TOBACCO COMPANY besloten vennootschaft met beperkte aansprakelijkheid (BE) ընկերության YES (IR 770008) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 34 և 35-րդ դասերի ապրանքների համար :

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան